



ՌՈՒՐԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՄԵՐ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՃԱՆԱԶՈՂՈՒԹՅՈՒՆԸ

I



Եր պատմության ամենահետաքրքրական հարցերից մեկն այն է, թե մեր պատմագիրները ի՞նչպիսի ըմբռնում են ցուցնել պատմության վերաբերմամբ առհասարակ, ի՞նչպես են մոտեցել պատմական դեպքերին ու անցքերին և ի՞նչպիսի լուսաբանություն են տվել նրանց։ Այս ամենի մեջ, իհարկե, գլխավորն ու հիմնականը այն է, թե ի՞նչպիսի աշխարհայացք են դրել նրանք իրենց երկերում։

Անշուշտ, վեճի առարկա չի կարող լինել այն հանգամանքը, որ յուրաքանչյուր պատմիչ, որպես իր ժամանակաշրջանի ազդեցություններով ապրող և այդ ազդեցությունները որդեգրող անձնավորություն, կրել է իր ժամանակի դրոշմը, ապրել է այն հոգեբանությունն ու մտայնությունը, որ տիրապետող և թելադրող է եղել իր ժամանակաշրջանում և հետևապես նա իր երկում կամ ստեղծագործությունում դրել է այդ նույն ժամանակաշրջանի շունչն ու ոգին, այդ նույն ժամանակաշրջանի ժողովրդական զանգվածների ու խավերի հույսերն ու ակընկալությունները, ինչպես և նրանց ապագայի նկատմամբ ունեցած հավատն ու սպասելիքները։

Բայց այս արդեն ընդհանուր տեսակետ է և ըմբռնում, որ վերաբերում է ընդհանրապես բոլոր դարերի և ժամանակաշրջանների պատմագիրներին։ Անկախ այս ընդհանուր տեսակետից, անառարկելի պիտի համարել այն, որ ամեն մի պատմիչ ունեցել է իր անհատական տեսակետն ու միտումները, որ նա խնդիրները լուսաբանելիս, այս կամ այն ձևով հրապարակ է քաշել։ Եվ ըստ այնմ, պատմական իրողությունները հեղեղ-

վել են հեղինակի տենդենցներով և գաղափարախոսությամբ։

Կասկածից վեր է, որ պատմագիրը որևէ փաստի մոռացումով և շփոթանկելով, կամ որևէ պատմական դեպքի մանրամասնություններին ու դրդապատճառներին ծանոթ չլինելով, չի կարող դիրքավորվել այնպես, ինչպես որ այդ պահանջում են պատմական ստույգ իրողությունները և ճշմարտությունը, և ահա այս խնդիրներից էլ կախած կլինի նրա անաշուշտությունը և նրա պատմագիտական կարողության գնահատականը։

Վերահիշյալներն ի նկատի առնելով, անխուսափելիորեն պետք է հանգել այն եզրակացության, որ պատմագրության արժեքը իրապես կապված է պատմական դեպքերի լրիվ և ստույգ լուսաբանության հետ, դեպքերի հաջորդական զարգացման, նրանց հասարակական դրդապատճառների ամբողջական բացահայտության և պաթոլոգիան հետ։

Պատմագիրն, անկախ իր համոզումներից և անհատական ըմբռնումներից, պետք է հանդես գա իր դարաշրջանի իրական և ստույգ իկաբագրով, և այս հանգամանքը երբեք չի խանգարի պատմագրին ընդգծել և նշել նաև իր տեսակետն ու համոզումները։

Եվ ահա այս տեսակետից է, որ անհրաժեշտ է ռեպուտասիբել ու վեր հանել մեր պատմագիրների պատմահայեցողությունը, նրանց պատմագիտական ճանաչողությունն ու ըմբռնումը։

Ընդհանուր առմամբ սխալ կլինի կարծել, որ մեր պատմագիրները յուրացրած չեն եղել, կամ թերի չափով են յուրացրել իրենց ժամանակի պատմագիտությունը և առհասարակ

րակ պատմագիտության հետ կապված հարցերը:

Հնդհակառակը, նրանց երկերից և նամանավանդ նրանց գրած հառաջարաններից պարզորոշ կերպով երևում է աչն պատասխանատվությունը և գիտակցականությունը, որ նրանք զգում են պատմության, երկրի ու ժողովրդի և, նամանավանդ, գալիք սերունդների հանդեպ:

Բարոյական պատասխանատվության այս զգացումով են հեղեղված խորենացու, Ագաթանգեղոսի, Ղազար Փարպեցու երկերը:

Այսպես, մեր մեծ քերթողահայրը՝ խորենացին խոսք չի գտնում դրվատելու Սահակ Բագրատունու հայ ժողովրդի պատմությունը գրել տալու նախաձեռնությունը: Իրեն արված պատմություն գրելու առաջարկն ընդունում է սրտի անհուն հրճվանքով և համըշտակությամբ: Նա շատ բնորոշ բառերով է ողջունում Բագրատունու առաջարկը: Իր առաջին գրքի վերնագրում նշում է. «Յաղագս մերոյս յիսկզբանն յայսմ քանիցս Սահակայ Բագրատունույ խնդալ»: Յակայն այս խնդությունը, որ հայտնում է խորենացին իրեն արված առաջարկի վերաբերյալ, շատ թույլ է արտահայտելու խորենացու ներքին հուզումներն ու ապրումները, այն ոգևորությունը, որ համակել է նրան և նա շարունակում է. «Զանսպառ խաղացմոնս աստուածայնոցն ի քեզ շնորհացն և զանդու Հոգւոյն ի վերայ քո իմացուածոցդ շարժմոնս ծանեայ ի ձեռն գեղեցիկ խնդրոյս...», և այս առաջարկը նախ սիրելի է իրեն՝ խորենացուն և առավել նրա սովորությանց. «որ և սիրելի իմոց իսկ ախորժակացս է, առաւել եւս սովորութեանց»: Անշուշտ, խորենացին ուզում է շնչոտել իր և Բագրատունու զգացումների ու մտածողության համատեղությունը պատմություն գրելու և պատմություն ունենալու վերաբերյալ, բայց նշելով «սիրելի է իմոց ախորժակացս և առաւել եւս սովորութեանց», ուզում է ասել, որ երկար տարիներ, գուցե և իր ամբողջ կյանքի ընթացքում միայն այդ նպատակն է ունեցել, հղացել է և ծրագրել, պատրաստվել է և ուսումնասիրել, սակայն նյութական պայմաններ չի ունեցել այն իրական գործի վերածելու, այսինքն պատմություն գրելու, քանի որ մագաղաթը խոշոր գումարներ էր պահանջում:

Ստանալով Սահակ Բագրատունու առաջարկը, խորենացին կանգնում է ահավոր ճշմարտության առաջ, այդ այն է, որ մեր ժողովուրդն անցյալ և պատմություն է ունեցել, ապրել է պատմական խոշոր իրա-

դարձություններ, ստեղծագործել է ու կերտել, պայքարել է ու հաղթանակել, և ահա դարերի ընթացքում կուտակված այդ գործունեությունն ու աշխատանքը գրի չի առնել, չի արձանագրվել, որ այդ պատմությունը և՛ կա և՛ չկա: Այն կա, քանի որ ժողովուրդը պատմական ճանապարհ է անցել, այն չկա, քանի որ չի գրի առնվել և մնացել է անհայտության մեջ:

Ահա թե ինչու պատմագիրը տխրությամբ ու վշտով արձանագրում է. «Կամիմ եւ ոչ զանիմաստասէր բարս առաջնոցն մերոց նախնեաց առանց յիշատակի բամբասանաց թողուլ. ալլ եւ աստէն իսկ յիսկզբանն մերոյ գործառնութեանս վասն նոցա կշտամբութեան յարմարել զբանս» (գլուխ Գ.):

Քննադատական այս սուր փոսքերը ուղղված են մեր նախնիքներին, որոնք խմատախիրության մասին չեն խորհել և որի պատճառով մենք շատ բան ենք կորցրել և չենք ունեցել մեր վաղեմի ժամանակների պատմությունը: Այս հարցը խորենացին շոշափում է իր աշխատասիրությունն սկսելիս, ազդարարում է այն ի գիտություն բոլորին և հենց այդպիսով, հետ այսու, պատմություն ունենալու և «անիմաստասեր» լինելու անհրաժեշտությունն է՝ ղնում երկրի և ժողովրդի առաջ:

Մեծ գոհունակությամբ հիշատակելով այն օտար թագավորներին, որոնք իրենց ժամանակի և իրենց նախորդների պատմությունն են գրել տվել, այլ և հրապարակ թերելով նաև դիվանատներում աշխատողներին մեծ գործը պատմության բեկորները պահպանելու գործում, ինչպես որ կատարել են քաղղեացիք, ասորեստանցիք, եգիպտացիք և հելլենացիք, ապացուցում է մեր նախնիքների անիմաստասիրությունը և անփութությունը, անշուշտ դրանով խորենացին նշում է այն, որ մերոնք կարող էին և պետք է նոցանից օրինակ վերցնէին, հետևին նրանց պատմությունը պահպանելու գործում:

Նա իր այս դրույթը պատճառաբանում է հետևյալ ձևով. «Ե՛ր ձեռն որոց և մեր ընթեռնուլն զառ ի նոցանէ՝ շարածս բանից, ըստ աշխարհօրէն կարգաց իմաստնանալ ասեմք, եւ քաղաքական ուսանել կարգաւ»:

Ինքնին հասկանալի է, որ քերթողահայրը այս նախադասությամբ ոչ միայն նշում է պատմության ուսանելի և դաստիարակիչ կողմերը, ուրիշ ազգերի փորձառությունից օգտվելու և մեր երկրում գործադրելու անհրաժեշտությունը և առհասարակ իմաստավորվելը, այլև, այլ երկրների և ժողովուրդների պատմությունը գիտենալու ան-

հրաժեշտությունը: Այս ցույց է տալիս պատմահոր լայն ըմբռնողությունը պատմության մասին:

Այնուհետև, խորենացին խիստ հետևողականորեն եզրակացնում է. «Ապա ուրեմն ամենեցուն մեզ յայտնի է թագաւորացն մերոց եւ այլոցն առաջնոց առ ի յիմաստն աղամարտութիւն, եւ անկատարութիւն ոգւոյն բանականի: Զի թէպէտ եւ եմք ածու փոքր եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ եւ զօրութեամբ տկար եւ ընդ այլով յուով անգամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոց յիշատակի, գրոց եւ ոչ մի ոք ի նոցանէ պէտք յանձին կալաւ մատենագրել» (գլուխ Գ.):

Սակայն այս մտալլ գնահատականն ու եզրակացությունը բնորոշ գնահատական է մինչ խորենացին եղած ժամանակաշրջանի համար մեր ժողովրդի հասարակական զարգացումը ճանաչելու տեսակետից:

Երկրորդ հանգամանքը, որ նշանակալից տեղ է բռնում այս գնահատականի մեջ, այդ խորենացու դեմոկրատիկ մոտեցումն է դեպի պատմությունը եւ ժողովուրդները եւ նամանավանդ դեպի մանր ժողովուրդները:

Նշելով, որ հայերը փոքր ժողովուրդ են եւ «զօրութեամբ տկար», սակայն նրանք ակնառու գործեր են կատարել մեր երկրում եւ որոնք արժանի էին գրի առնվելու եւ մատենագրվելու, որ չի կատարվել, այսպիսով բնականաբար խորենացին դնում է մանր ժողովուրդների պատմություն ունենալու անհրաժեշտությունը եւ երկրորդ, որ մանր ժողովուրդներն եւ «բազում գործք արութեան» գործելով, իրենց համեստ լուծան են դնում համաշխարհային պատմության եւ համամարդկային կոլտուրայի գանձարանում, եւ որը անտես չպիտի թողնվի:

Այնուհետև, խորենացին կանխում է այն պատճառաբանությունները, որ կարող են դնել իր առաջ եւ նշում է. «Այլ ասիցէ որ արդեւ. վասն ոչ լինելոյ գիր եւ գրութիւն ի ժամանակին, կամ վասն պէս պէս պատերազմացն, որ կուտ զմիմեանց զկնի անհետ ի վերայ գային» (գլուխ Գ.):

Այս պատճառաբանությունը խորենացին չի հարդում, քանի որ մատնանշում է պարսից եւ հունաց գրերի գործածության առկայությունը Հայաստանում, ինչպես արքայական դիվանատներում, նույնպես եւ նախարարական տներում, գյուղերի, գավառների սեփականատիրության, դաշինքների եւ այլ դրույցների վերաբերմամբ, որոնք, ինչպես ինքն է ասում, «այժմ առ մեզ գտանիք»:

Ահա խորենացու պատճառաբանված մերկացումը. «Այլ ոչ արդարեւ այսօրիկ կարծեցեալ լինի, քանզի գտանին եւ միջոցք լեալ պատերազմացն, եւ գիր Պարսից եւ Յունաց, որովք այժմ գիւղից եւ գաւառաց կա եւ իւրաքանչիւր տանց առանձնականութեանց, եւ հանուրց հակառակութեանց եւ դաշանց այժմ առ մեզ գտանին անբալ գրուցաց մատեանք (ընդգծումը մերն է — Ռ. Ա.). մանաւանդ որ ի սեպհական ազատութեան պայազատութիւն» (գլուխ Գ.):

Խորենացին այս բոլորից հետո վերջնականապես եւ անդրդվելիորեն եզրափակում է. «Այլ ինձ թուի, որպէս այժմ՝ եւ առ հինսն Հայաստանեայց լեալ անսիրելիութիւն իմաստութեան եւ երգարանաց բանաւորաց, վասն որոյ աւելորդ է մեզ եւ այլ յաղազ անբանից արանց թուամտաց վայրենեաց ճառել» (գլուխ Գ.):

Ինչպես տեսնում ենք, խորենացին իր քննադատությամբ ոչ միայն անխոցելի է, այլեւ շահագանց խիստ է դեպի երկրի դեկավարները, որոնց անվանում է վայրենիներ եւ որոնց վերաբերմամբ անխնայ է: Այս բխում է նրա պատմագիտական լուրջ հասկացողությունից եւ բուն հայրենասիրությունից:

Այս բոլորից հետո միանգամայն հասկանալի են եւ տեղին այն դրվատանքն ու փառաբանությունը, որ խորենացին ուղղում է իր մեկենասին՝ Սահակ Բագրատունուն: Նա գրում է. «Վասն որոյ ոչ միայն գովել արժան է զբեզ, այլ եւ ի վերայ քո աղօթել առ ի լինել քեզ միշտ այսպիսի»: Այս ձեռով Բագրատունուն աստվածացնելը միանգամայն համապատասխանում է նրա ձեռնարկած գործին:

Հիշումքի, աստվածանալու արժանի գործ էր տեսնում Բագրատունին, երբ հանձնարարում եւ պարտադրում էր խորենացուն գրել Հայոց պատմությունը, դրանով միաժամանակ նա հիմնավորում եւ ստեղծում էր հայ-ձեռագիր տպագրությունը, որի հիմքը դրել էր խորենացու ուսուցիչ անմահ Ս. Մեսրոպ Մաշտոցը:

Խորենացին դրվատելով իր մեկենասին, նրան համեմատության մեջ է դնում հայ աշխարհի, ինչպես ամեցյալ ժամանակաշրջանի, այլ եւ իր ժամանակի իշխանների հետ եւ գտնում է, որ նա միակ սրտացալն ու հոգատարն է հայ կյանքի առօրյային եւ ամեցյալին իր գործով եւ փառատությանը: Եվ նա շարադրում է. «Առ որով տեսանեմ եւ զայս, զի եթէ որք յառաջ քան զմեզ եւ կամ առ մեք եղեն հարուստք եւ իշխանք աշխարհիս հայոց, ոչ ընդ ձեռամբ անկեղոց իւրեանց արդեւ գտնեց իմաստնոց զայսպիս-

եացա հրամայեցին վարդել զյիշատակս բանից, եւ ոչ արտադրատուութեան արտադրելի ի ներքս ածել խորհեցան օժանդակութիւնս իմաստից, եւ զքեզ այսպիսի այժմ եղեալ ծանեաք, ապա յայտ է ուրեմն, թէ ամենեցուն քան զքեզ նախադրեցին ճանաչիս վեհագոյն, եւ քարճագումից արժանաւոր գովութեանց եւ յայսպիսիս պատկանաւոր դնիլ յարձանագրութիւնս քանից»:

Այստեղ խորենացին հասարակական շահերի համար մարտնչողի լրիւ գիտակցականութեամբ ըմբոստանում է իր ժամանակակիցների դեմ, «Եւ կամ առ մեք եղեն հարուստք կամ իշխանք աշխարհիս հայոց», որոնք չեն հրամայել Վարդել զյիշատակս բանից», այսինքն չեն հոգացել պատմութեանը գրել տալու մասին, չեն օգտագործել ջրնոց ձեռամբ անկեղծ իւրեանց արդիւք գտելոց իմաստնոց, և ոչ էլ խորհել են դրսի աշխարհից, լուսավոր երկրներից՝ «արտաքուստ ուստեք» իրենց երկիրը մտծել իմաստութեանը՝ «ի ներքս ածել օժանդակութիւնս իմաստից»։ Եվ որովհետեւ այդ անապատի մեջ այդպիսին հանդիսանում է միայն Սահակ Բագրատունի իշխանը, հետեւապես նա արժանի է ամեն տեսակի փառքի ու գովերգութեան:

Այսպիսով, խորենացին քննադատում է նաեւ իր ժամանակակիցներին, իրեն հատուկ քննադատական սուր նշտարներով և ժողովրդականացնում և հասարակության սեփականութեան է դարձնում պատմութեան ունենալու և այն գիտենալու սկզբունքները, որով և պատրաստում է մտավոր կյանքի մի հոյակապ հեղաշրջում:

Ահա այս է կազմում մեծ քերթողահոր՝ խորենացու արժանիքը և մեր կյանքին մատուցած ծառայութիւնը:

Որ հիրավի նա այդ առաջադիմական վեհմ նարատակներն է հետապնդում, այդ էրեւելում է հետագայում պատմած նրա յուրաքանչյուր գլխից ու գրույցից, նրա իմաստալից եզրակացութիւններից և, նամանակաւոր, նրա Ողբից:

Նրա Ողբը ոչ այլ ինչ է, եթե ոչ գոյութեան տնեցող պետական և հասարակական կազմի քննադատութեան, քննադատութեան այնպիսի վարպետութեամբ ու դրվածքով, որից բխում է խարխուղած և ապականված հին հասարակարգին փոխարինող նոր հասարակարգը:

Խորենացին սովորական պատմագիր է, նա արտասովոր և հանճարեղ ուժ է, որը նկարագրելով անցյալը, մատնանշում է գալիքը, դատապարտելով ներկան, ցույց է տալիս նրանից դուրս գալու ելքը: Ուստի և նա քննադատ պատմագիր է և առավել շա-

փով, ապագան ու գալիքը տեսնող մարգարե:

Այսպես է, այո՛, հնագույն դարերում ծնւած և ապրած հանճարեղ մտածողը, մեծ հայրենասերը:

Ապրելով այսպիսի ծանր հիասթափութեաներ և հոգեկան տանջանքներ, բնական է, որ խորենացու համար գլուստ պիտի լինէր Սահակ Բագրատունուց իրեն արված առաջադրանքը՝ գրել Հայոց պատմութեանը սկզբից մինչև իր օրերը: Զպիտի մոռանալ, որ այն ժամանակ այսպիսի մեծ առաջադրանքի իրագործումը վաղակառ էր նյութական կոշոր ծախսերի հետ, որի մասին խորենացին ոչ մի հիշատակութեան չի անում, բայց որը, անշուշտ, հոգում էր և հոգացել է հայրենասեր իշխանը: Եվ, բնական է, որ խորենացին միայն հիանալ կարող էր այս առթիվ, և ոչ միայն հիանալ, այլ այն համարել աստվածային հրաշք, նախախնամութեան գործ: Ուստի և նա գրում է. «Ջայնպիսի խաղաղմունս աստուածայնոցն ի քեզ շնորհացն իւ զանդուլ Հոգոյն ի վերայ քո իմացածոցդ շարժունս ծանեայ ի ձեռն գեղեցիկ խնդրոյս, յառաջ քան զմարմնոյդ՝ զհոգոյդ ընկալեալ զծանօթութիւն, որ եւ սիրելի իմոց իսկ ախորժակացս է, առանել ես սովորութեանց»:

Բագրատունու պատմութեանը գրել տալու իղձը, ինչպես տեսնում ենք, համարում է աստվածային շնորհք, որ նա ունի և Ս. Հոգու նրա վրա ունեցած ղեկավարութեան արդյունք, որը միանգամայն ի հայտ է բերում մեկենասի ներքին հոգեկան աշխարհը, նրա հոգու գեղեցիկութեանը, մի բան, որ համապատասխանում է հեղինակի՝ խորենացու ներքին մտորումներին՝ «սիրելի է իմոց ախորժակացս», և ոչ միայն այդքան, այլև խորենացու սովորութեաններին, այսինքն նրա կյանքին ու կենցաղին, նրա նպատակադրումներին ու որոնումներին:

Ինչպես որ պարզորեն երևում է այս տողերից, խորենացին վաղուց ի վեր նպատակադրել է պատմութեան գրելու աշխատանքին լծվել, նուրբ մտքերով է անվել, ինչպես և Բագրատունին, և անշուշտ որոշ արգելափակ հանգամանքներ չեն թույլատրել պատմահոգին իրագործել իր ծրագիրը, և ահա հանկարծ զուգահեյսել է Սահակ Բագրատունու առաջարկին:

Կարծում ենք, որ այս խնդրում խորենացին դրական համեմատութեան է արել և լռել իր մասին, բավականացել է միայն մեկ երկու խոսքով հայտնել, որ Բագրատունու առաջարկը լիովին համապատասխանում է իր ներքին մղումներին ու զգացումներին:

Բայց որ պատմություն գրելու առաջարկն արվել է հատկապես խորհնացուն, այդ ինքնին արդեն պատուով է այն համեստության թողը, որ իր վրա է առել խորհնացին: Անկասկած պիտի համարել այն, որ խորհնացին Ադրբեջանի հարավում վերադարձնալուց հետո, իր կյանքի հիմնական նպատակն է համարել հայ ժողովրդի պատմությունն ուսումնասիրելու և գրելու գործը և, զբիսավորապես, զբաղվել է դրանով: Առկա փաստերից այլ եզրակացություն հանել հնարավոր չէ, նամանավանդ որ նա գրում է. «Յադագա որոյ հեշտաբար բնկայեալ գրի խնդիրդ» (ընդգծումը մերն է— Մ. Ա.), աշխատասիրեցայց ածել ի կատարումն. անմահ ի յիշատակ թողուլ զայս քեզ, եւ որ զկնի քոյինքն են քաղոց աղագը» (զլուխ Գ.): Վերեւի տողերից հայտնապես երևում է՝ թե խորհնացին պատմագիտական հանաչողությունը ուրքան խոշոր նշանակություն է տալիս ինչպես ներկա, նույնպես և հետագա սերունդների համար: Նա իր գործը համարում է անմահ յիշատակ: Իրոք, ուրիշ փնջ անմահ առում և հիշատակ կարող էր վաստակել ու թողնել խորհնացին, քան այն, որ թողել է:

Ինչո՞ւ Որովհետև նա գրելու է ո՛չ միայն այն, ինչ որ գործել է մեր ժողովուրդը որպես նախնական և քաջ ժողովուրդ, որն արդյունավոր է եղել ո՛չ միայն խոսքի և պիտանի խոհականության մեջ, այլև բազմաթիվ մեծամեծ ու փոքրագույն գործեր է կատարել, որոնք մեկ առ մեկ հիշատակվելու են պատմության լուսնացրում: Ահա թե ի՞նչպես է ձևակերպում խորհնացին իր այդ ըմբռնումը. «Զի եւ ազգի եւս նախնականի, եւ քաջ եւ արգասաւոր ոչ միայն ի բանս և ի պիտանաւոր խոհականութիւնս, այլ եւ ի մեծամեծ եւ ի բազում գործս արժանափառս, զոր յիշատակեացուք ի կարդի պատմութեանս» (զլուխ Ա.):

Այսպիսով, խորհնացին գնահատում է մեր ժողովրդին և նրա պատմությունը, գտնելով որ այն այնքան խոշոր ու փառավոր դրամաներ ունի, որոնք անհրաժեշտ են արձանագրվելու. այս արդեն պատմության լուրջ և գործնական ըմբռնումն է, որ ի հայտ է բերում նա: Մի պահ, եթե հարցը զխիստ շղոտ տանք, պիտի գանք հակառակ եզրակացության, այսինքն՝ եթե պիտանի և փառավոր գործեր չգտնեն հայ ժողովրդի կյանքում, հետևապես և գրելու ոչինչ չպիտի ունենար: Այստեղ էլ ուրեմն ամենավերջին եզրակացությունը, այն, որ նա ոչ թե գրում է, որ ինքը հայ է,

այլ գրում է միայն նրա համար, որ փառավոր գործեր են կատարվել:

Այս ինքնըստինքյան վկայում է խորհնացու պատմագիտական լայն հորիզոնների մասին:

Դրվատելով հույն պատմագիրների աշխատասիրությունը և հոգատարությունը ոչ միայն իրենց ժողովրդի, այլ և օտար ազգերի ու թագավորների գործերը և նրանց գիվանատներում եղածները ի մի ամփոփելու և գրի առնելու հոգը, զինված բարի նախանձով դեպի այդքան մանրակրկիտ ուսումնասիրությունը, բնականաբար, խորհնացին հենց այդ մոտեցումով որոշում է իր պատմագիտական հանապարհը, այսպիսով ուրեմն՝ պատմությունը խորհնացու համար պատմություն է, ո՛րտեղ և ո՛ր ժողովրդի կողմից էլ այն կատարված լինի, հետևաբար և պատմական անցքերի մոտից թեթևակիորեն անցնել չի կարելի, այլ անհրաժեշտ է ըստ տեղին և արժանվույն գնահատել և մեկնաբանել: Խորհնացին դնում է, որ հույն պատմագիրներն այդ տեսակետից մեծ ծառայություն են մատուցել իրենց ժողովրդին և հայրենիքին: Խորհնացու հետևողական և ինքնաքննի եզրակացությունն այն է, թե եթե այդ արել են հույները և հանջողել, ինչո՞ւ չպիտի անենք, չպիտի անեինք նաև մենք:

Եստեղականով դրվատումը, նա գրում է. «Եւ ժողովեալ զայստիկ արանց, զորոյ եւ մեք զանուսանս հաստտի գիտեմք, նուիրեցին ի փառս հեղինացաց աշխարհին: Եւ գովելիք են, որպէս փմաստասիրեցաւքն՝ յադագա ջանին եւ իմաստութեանն առ ի յալոցն լինելոյ գտակք. առաւել եւս որք ընկալան եւ պատուեցին զայսպիսի գիտող իմաստից: Վասն որոյ եւ զբոլոր իսկ գնոյնս ոչ դանդաղեալ մայր կամ դայեակ ասել փմաստիցս:

Այստեղ խոսքը և գովասանքը վերաբերում է հույն իմաստասերներին, որոնք ուրիշ ազգերից իմաստություն են ձեռք բերել և այն նվիրել են իրենց ժողովրդին, նույնքան խելամուտներն են վարել նրանք, որոնք բնորոշ և պատվել են իմաստասերների տվածները, այլ խոսքով՝ գնահատել են նրանց աշխատանքը, որի համար և խորհնացին Հռոմաստանը համարում է մայր իմաստություն:

Խորհնացին իր քննադատականը եզրափակում է հետևյալ հակիրճ նախադասությամբ. «Վասն Յունացն զրուցաբանս զակնարկութիւն մերոց պիտոյիցս առնելոյ՝ բուսական է այսչափ»:

(Եստեղական)